ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին

ՀՐԱՄԱՆ

№5087 29 MAY 2019 ժամ 12 35

« 29 » մայիս 2019 թ No 1397 - Ա

Դեպի ☐ Դեղի կարգավիճակ_____

Դեղեր_____ ~~ԹԱՅԼԱՆԴԻ~~ «ՊՈԼԻՖԱՐՄ ՔՈ., ՍՊԸ, 109 ԲԱՆԳՆԱ-ՏՐԱԴ ՌՈԱԴ, ԲԱՆԳ ՖԼԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ, ՍԱՄՈՒՏ ՊՐԱԿԱՆ 10540՝ ԵՎՐՈԴՐԱԳ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԵՍ Ս.Ա., ԿՈՐՏՐԻՋԿՍԵՍՏԵՆՎԵԳ 214,9830 ՍԻՆՏ-ՄԱՐՏԵՆՍ-ԼԱՏԵՄ (ԲԵԼԳԻԱ)-Ի ՀԱՄԱՐ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ « ՈՒՐՈՏՐԱԿՏԻՆ, ՊԻՊԵՄԻԴԱԹԹՈՒ (ՊԻՊԵՄԻԴԱԹԹՎԻ ՏՐԻՀԻԴՐԱՏ), ԴԵՂԱՊԱՏԻՃՆԵՐ, 400ՄԳ; (10/1Х10) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ » ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 32-րդ մասը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2019 թվականի մայիսի 13-ի թիվ 15799/1 փորձագիտական եզրակացությունը, «Դեղերի եվրոպական գործակալության դեղազգոնության և ռիսկերի գնահատման կոմիտեի (EMA/175398/2019) գրությունը, անվտանգության նկատառումներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Դադարեցնել Թայլանդի «Պոլիֆարմ Քո., ՍՊԸ, 109 Բանգնա-Տրադ Ռոադ, Բանգ Ֆլի մասնաճյուղ, Սամուտ Պրական 10540՝ Եվրոդրագ Լաբորատորիես Ս.Ա., Կորտրիջկսեստենվեգ 214,9830 Սինտ-Մարտենս-Լատեմ (Բելգիա)-ի համար» դեղագործական ընկերության արտադրության «Ուրոտրակտին, պիպեմիդաթթու (պիպեմիդաթթվի տրիհիդրատ), դեղապատիճներ, 400մգ; (10/1x10) բլիստերում» դեղի շրջանառությունը և ապահովել հետհավաքը Հայաստանի Հանրապետությունում:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

29.05.19 ժ. 10

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

5/29/2019

X

VERIFIED OCSP 5/29/2019 09:20:00 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ